

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՎ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ  
«ՔՆՆԻԿՈՆԸ»

Միջնադարյան հայ մշակույթի նշանավոր գործիչ Գրիգոր Մագիստրոսը, իր ժամանակի ամենազարգացած անհատներից մեկը, հայրենի դպրոցները խորունկ տիրապետելուց բացի, հմուտ էր հելլենական, ասորական և արաբական գիտությունն ու գրականությունը: Նա փիլիսոփա էր, քերական, մանկավարժ, բանաստեղծ, թարգմանիչ, բնական գիտությունների շատագույն, հայրենի երկրում բարձրագույն կրթությունը տարածող և հովանավոր:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին «մի հետաքրքիր դեմք է... իր ժամանակի համեմատ ազատամիտ ու լուսամիտ մի բազմադեմ անձ,—գրում է Մանուկ Աբեղյանը:—Նրա մեջ մարմնացել է իր ժամանակի վերածնության մտքի մի կողմը—չբավականանալ միայն կրոնականով և եկեղեցական դպրոցով, վերանորոգել և զարգացնել հայերի մեջ հին հունական գիտությունը... և ընդհանրապես բազմակողմանի գիտանքներ ձեռք բերել...»

Բոլոր ուսյալ աշխարհականների մեջ առանձնապես փայլում է այս Պահլավունի իշխանը..., իսկական լուսավորական գործիչ: Նա ոչ միայն ուրիշներին հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, այլ և ինքը շարունակ սիրով և անխոնջ հետևել է դրան՝ նշանաբան ունենալով «պատարուն ընթերցմամբ», «գիտութեամբ լուսաւորել զանձն»<sup>1</sup>: Նա ուներ իր դպրոցը, որի, ինչպես նաև ուրիշ դպրոցների համար մշակել է ճեմարանական ծրագիր, ձեռք է բերել ձեռնարկներ և հանձնարարել ուսուցման:

Գործունեության այս ճանապարհին Գրիգոր Մագիստրոսը հանդիպում է Անանիա Շիրակացու «Քննիկոնին»:

Անանիա Շիրակացին «Քննիկոնը» գրում է Անաստաս կաթողիկոսի (661—667 թթ.) հանձնարարությամբ: Այդ մասին ուղղակի վկայություն ունենք Ստեփանոս Ասողիկի Պատմութեան մեջ<sup>2</sup>: Նրանից առաջ, Հ. Դրասխանակերտցին այս նույն բանը հաղորդում է առանց «Քննիկոն» անունը տալու<sup>3</sup>: Նրա վկայությամբ «Քննիկոնը» կաթողիկոսի մահից հետո ուշա-

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ (11—19-րդ դդ. 30-ական թթ.), Երևան, 1946, էջ 16—19:

2 Մասենազարան, ձեռ. № 2865, էջ 170 ա: Հմմտ Ստ. Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 285: Հրատարակիչ Ս. Մալխասյանը «Քննիկոն» բառի փոխարեն գրել է «Քրօնիկոն» և ստորին լուսանցքում ծանոթագրել. «Ձեռագրում աստ և ստորև «Քննիկոն»: Այդպես է նաև Տարոնացու Պատմութեան բոլոր ձեռագրերում: (Տե՛ս Ա. Մարկվոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 7, էջ 69—70):

3 Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92—93:

դրույթյան շի արժանանում, և ինչպես հաստատում է Գրիգոր Մագիստրոսը, պահվում է կաթողիկոսարանում<sup>4</sup>:

Պետրոս Գետադարձին 1036 թ. դահաղրկելու և մի տարի անց վերստին գահին հաստատելու առթիվ Գ. Մագիստրոսը մի նամակ է ուղարկում նրան, որն ունի այսպիսի խորագիր. «Առ անք Պետրոս ի ժամանակի խուժան յաննելոյ ի քաղաքին, ի վերայ նորա բան մխիթարական և հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»: Վերնագիրը ցույց է տալիս, որ նամակում երկու հարց է շոշափվել. առաջինը Պետրոս Գետադարձին աթոռից զրկելու և վերստին աթոռին հաստատելու մասին մխիթարական խոսք է<sup>5</sup>: Յավելով տեղի ունեցածի համար, Գ. Մագիստրոսը մխիթարում է նրան, ողևորում, հորդորում, խորհուրդ է տալիս մաքի տեսութայամբ, հոգու աչքով շուրջը նայել և ծառայել ժամանակին («...միայն պարտ է աւագ աշօք շուրջ հայել և ժամանակի ծառայել»)<sup>6</sup>:

«Ժամանակի ծառայել» է նաև Անանիա Շիրակացու «Քննիկոն» մասին հոգալը, որին Մագիստրոսը անդրադառնում է նամակի երկրորդ կեսում: Բերում ենք նամակի այդ մասը, միայն խորագրի «հարցումն» բառը ուղղում ենք «հայցումն» ձևով, հիմք ունենալով Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագիրը<sup>7</sup>, ապա՝ նամակի մեջ նույն նպատակով օգտագործող «զհայցումս» բառը և, վերջապես, թղթի ավարտը, ուր բացահայտվում է նամակի նպատակը. այնտեղ Գրիգոր Մագիստրոսը Պետրոս Գետադարձից Անանիա Շիրակացու «Քննիկոնի» նոր ընդօրինակություն է խնդրում, հայցում: Ուրեմն՝ «...Հայցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»:

«Գրիգոր Մագիստրոսի թղթերն ունեն վերնագրեր, — գրում է Մ. Արեղյանը, — որոնք ծագում են հավանորեն կամ հեղինակից, կամ նրան մոտիկ մարդկանցից, քանի որ վերնագրեր դնողներն փմացել են, թե ինչ առթիվ են գրված և ումն են ուղղված այս կամ այն թուղթը: Գրութայան բովանդակությունից միայն՝ երբեմն շի փմացվում այդ»<sup>8</sup>: Ինչպես մյուս թղթերում, այնպես էլ այստեղ դրութայան բովանդակությունը և խորագիրը լիակատար համապատասխանության մեջ են, որն հաստատվում է նաև Սահեփանոս Ասողիկի հանրահայտ վկայությամբ<sup>9</sup>, միջնագարյան մատենագիտական ցանկերով ու ձեռագրացուցակներով<sup>10</sup>:

Նամակի սկզբից տեղեկանում ենք, որ Անանիա Շիրակացու գիրքը, որ կոչվում է «Մեծ Քննիկոն», դանվում է «տէրունեան տանը», այսինքն՝ կաթողիկոսարանում, և մինչև Պետրոս Գետադարձի կաթողիկոսական գահ բարձրանալը (1019 թ.), անշքացած, թաքուն պահում էին գրվանի տակ: Այս նշանակում է, որ 667 թվականից (Անաստաս կաթողիկոսի մահը)

4 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8:

5 Ուրեմն նամակը գրված է այդ դեպքերից անմիջապես հետո, 1038 թ.:

6 Նույն տեղում, էջ 7:

7 Գ. Զարբանալյան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 579:

8 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 21:

9 Ստ. Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, էջ 285:

10 «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամրդուլ՝ համարով, անհինգ լիցատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետին», «Արարատ», 1903, էջ 178: 1891 Շ. Տաշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վիեննա, 1895, էջ 253: Լ. Թովմյան, Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 134 և այլն:

«Քննիկոնը», որի մեջ գտնվում էր նաև հայոց անշարժ տոմարը, արգելված էր կաթողիկոսարանում:

Գրիգոր Մազիստրոսը «Քննիկոնն» ուսումնասիրել էր մինչև Պետրոս կաթողիկոսին գահազրկելը: Նամակի ընդհանուր ոգուց երևում է, որ նամակից առաջ և «Քննիկոնն» ուսումնասիրելուց հետո Պետրոս կաթողիկոսի և Գրիգոր Մազիստրոսի միջև խոսակցություն է տեղի ունեցել, որտեղ Շիրակացու աշխատության դադարի պահինը պատճառաբանվել է նրա «խրթին և անշայտաբար», այսինքն՝ «զժվար հասկանալի», «ըստ իմաստից մթին», «անորոշակի» գործ լինելով: Գրիգոր Մազիստրոսը այդ տեսակետը փարատելու համար, նամակով պարզաբանում է աշխատության բովանդակությունը, դրվատում նրա գիտականությունը, նշում գործնական կարևորությունն ու անհրաժեշտությունը, որպես ուսումնակրթական ամբողջ համակարգի դասագրքի, և մի օրինակ էլ խնդրում, որպեսզի օգտագործի իր դպրոցում: Այսպես է գիմում կաթողիկոսին.

«Փոխան Յիսուսի, համարձակիմք, միշտ սովորեալ յառատաձիր պարգևս, զկարևորսն և զպիտանացուան յարատեւական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակացնոյ, որ բազում աշխատութեամբ և յաճաշու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յօրնաբեղուն մատենից. յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս. որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախքան զքեզ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին... յորում մթերեալ են տոգորք աստուածային, և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան, և նախագասել է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարորոշ քանակէ տարակացեալք, իսկ երկրաշափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ. և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակացութիւնք, մատենագրութիւնք և զրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական»<sup>11</sup>: Ինչպես տեսնում ենք, «Քննիկոնը» ուսումնակրթական որոշակի համակարգի, այս դեպքում հռետորական կրթության դասընթացի դասագիրք է, որը պարունակում է «քառիցն արհեստք» և որը Անանիա Շիրակացին համարում է «հռետորական ուսումն»: Քառյակ արվեստները կամ գիտությունները նույնպես բնկած էին հույն փիլիսոփա Պլատոնի դաստիարակության հիմքում: Մեր թվարկության սկզբներին, գանազան փոփոխություններից հետո, դրանց վրա հենված անտիկ դասընթացը հետևյալ գիտություններից էր կազմված. քերականություն, հռետորություն, տրամաբանություն, թվաբանություն, երկրաշափություն, երաժշտություն և աստղագիտություն:

Քրիստոնեական եկեղեցին, որն այնքան նպաստել էր անտիկ կուլտուրայի ոչնչացմանը, V դարի սկզբներին փորձ արեց ի մի բերել անտիկ գիտելիքների նվազագույնը, որն իրեն անհրաժեշտ էր: «Զի կարելի հասկանալ Աստվածաշունչն ու եկեղեցու հայրերին, պաշարել հեթանոսության ու հերետիկոսության դեմ առանց իմանալու հռետորությունը, քերականությունը, գիալեկտիկան, պատմությունը և նույնիսկ բնական գիտությունները», — գրում է եկեղեցու հեղինակություններից մեկը, Օգոստինոսը (354—430 թթ.)<sup>12</sup>:

<sup>11</sup> Գրիգոր Մազիստրոսի Բզմերը, էջ 8:

<sup>12</sup> «Միջին դարերի պատմություն», մ. Ա., Երևան, 1958, էջ 266:

IV դարի սկզբներին Մարցիանոս Կապելլան տալիս է այդ առարկաների շարադրանքը, Բոհեցիոսը (481—525 թթ.) գրում է տրամաբանության, բարոյագիտության, թվաբանության, երկրաչափության և երաժշտության դասագրքեր: VI դարում Կասիոդորը առաջին անգամ գործածում է «յոթն ազատ արվեստներ» արտահայտությունը, և այն դիտում որպես քրիստոնեական աստվածաբանության նախապատրաստական ուղղափառ արտաքին ուսմունք: Իսիդորը (556—636 թթ.) յոթ ազատ արվեստներից առաջին երեքը՝ քերականություն, հոնտորություն, դիալեկտիկա դասավորում է իբրև «եռուղի», իսկ մյուս չորսը՝ թվաբանություն, երկրաչափություն, երաժշտություն և աստղագիտություն՝ իբրև «քառուղի» դասընթացներ, «ըստ որում «եռյակը» համարվում էր ուսուցման առաջին աստիճանը, «քառյակը»՝ բարձր: Այդ առարկաները մտան միջնադարյան բոլոր դասագրքերում և պահպանվեցին մինչև 15-րդ դարը»<sup>13</sup>:

IV—V դարերում գոյություն ունեին քերականների, հոնտորների և փլիսոփաների դպրոցներ: «Քերականների դպրոցներում պարապմունքների շարունակվում էին չորս տարի, որից հետո երիտասարդը կամ ուսումնալարտված էր համարում կամ ընդունվում էր հոնտորական դպրոց... հունական, լատինական կամ խառը հոնտորական դպրոց, որի տեսությունը նույնպես չորս տարի էր»<sup>14</sup>: Ահա միջնադարյան այս տիպի դպրոցի համար էր դասագիրք ստեղծել Անանիա Շիրակացին, որի առանցքը քառյակ արվեստներն էին, որի մեջ, ինչպես նշում է ինքը, նաև՝ «ամենայն բոլոր վարժումն հոնտորական»<sup>15</sup>:

Գրիգոր Մագիստրոսը այնուհետև պարզաբանում է, որ «Քննիկոնի» մեջ հավաքված նյութերը Անանիա Շիրակացին քաղել է քաղղեացիների, հույների և այլ ազգերի մատենագիրներից, որոնք այդ ժողովուրդների մոտ ուսումնասիրվում էին արդեն որպես իմաստասիրական գիտություն, որպես հոնտորական ուսումն: Քանի որ ովքեր դրանցով նախապես շեն կրթված, բոլորովին հնարավոր չէ այդպիսիներին աստվածաբանության մեջ մուտք գործել. «Թեպէտ և մասնաւոր զփոշէտեսական զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոցի այդր ի բազմավէտ մատենադրից Քաղղեացոց և Յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ, որք նախ քան զայնոսիկ հաւաքեալն մատեանս, մակացու եղեալ իմաստասիրութեան, քան զի որք ոչ նախուստ կրթեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թեակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս. քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անտուստ աստուածաբանականն... վասն որոյ և Պղատոն իսկ զգուշացուցանէ այսպէս յիրումն աստուածաբանութեանն. Աներկրաչափական որ մի ներամտեսցէ. զայսոսիկ ասելով. զի Մի որ անկատար ի քառիցն ենթակայէ մտցէ ի լսարանն...»:

Գրիգոր Մագիստրոսը գիտությունների դասակարգման վերը բերված ձևակերպումը վերցրել է Անանիա Շիրակացու «Քննիկոնից», որի նորերս հայտնաբերված հատվածում, որը Գրիգոր Մագիստրոսը անվանում է «տո-

<sup>13</sup> «Միջին դարերի պատմություն», խմբ. աղագ. Ս. Գ. Սկազկին և ուրիշներ, Երևան, 1975, 735—736:

<sup>14</sup> Г. Е. Жураковский, Очерки по истории античной педагогики, Учпедгиз, М., 1940, стр. 354, 362.

<sup>15</sup> Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 8—9:

գորք աստուածային» կամ «էակաց խոկմունս», կարգում ենք. «Զի բնականն ամենևին մարմին է և աստուածականն ամենևին անմարմին, և ուսումնականն միշակ երկուցն, զի ունի մասն ի մարմնոյ և յանմարմնոյ, վասն այն ի միշի բնաբանականին և աստուածաբանականին եղ զուսումնականն, զի զկնի ամենևին մարմնականին վարժելով զամենևին անմարմնական զտանիմք»: Անանիա Շիրակացին, իր հերթին, այն վերցրել է Դավիթ Անհաղթից<sup>16</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ հոետորական դասընթացի տարողութիւնը ավելի բնագրծակ էր: Նշված առարկաների հետ դասավանդվում էին նաև բժշկութիւնը<sup>17</sup>, տոմար («Քննիկոնի» մեջ)<sup>18</sup> և այլ առարկաներ:

«Եւ արդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բեր ոչինչ խրթին և անյայտարար. կամիմք զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսաւորչիդ. ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառութիւնք և հանդէսք, որ ոչ երբէք ի ստադին վարժելոյ գրամարտկոսաց և քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլ և բազմաց, որպէս ի մերոյն Մովսիսէ<sup>19</sup> ուսեալ, գտեալ զտաք և յայդմ մատենի մակազրութեան վերծանեաք: Քանզի Արամեան սերի հպարտութիւն և անամոք բնութիւն և խստապարանոց բարս ոչ ստորակայի յայտասիկ կրթութիւնս յարատեական հաւանել, կամ եթէ ոչ փոյթ, որք պետականին հասին բախտի, մեծարու լինել և խուզել զխոհեմական արհեստս ի զարդ քարզոնոսական ապարանին, որպէս մեծ Փալումէոսն այն և որք այլք այդպիսիք»<sup>20</sup>:

Մագիստրոսը, որպես իր պատճառաբանութիւն ամենահարմար ապացույց, բերում է իր անձի օրինակը, ցույց տալու համար, որ եթե ինքը հասկացել է Անանիա Շիրակացու «Քննիկոնը», պատճառն այն է, որ նա ուներ հենց այդ բնագավառի կրթութիւն, որ ձեռք է բերել արաբական, քաղղեական և հունական մատենագիրներից. «Եւ զի բազում աշխատասիրութեամբ խոնջեալ և տազնասպեալ, մինչ տակաւին յիմում անտիականն

16 «Եւ պարտ է զիտել, զի բնաբանականն զառաջինն ընկալաւ դաս... որպէս ամենևինք նիւթական: Իսկ ուսումնականն զմիջինն ընկալաւ դասաւորութիւն, այսինքն ի մէջ բնաբանականին և աստուածաբանականին, վասնզի և նիւթաւոր է, որպէս աստուածաբանականն: Իսկ աստուածաբանականն... զվերջին ընկալաւ դասաւորութիւն, վասնզի ոչ է կարողութիւն յետ բնաբանականին յաստուածաբանականն ամբառնալ, վասնզի և ոչ է պարտ յամենևինք նիւթականացն՝ այն ինչ աննիւթականս մատչել...»: (Դավիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք. համահավար բնական բնագիրք և առաջարանը Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 87—88): Բնականաբար այն ծանոթ էր նաև Գ. Մագիստրոսին, ինչպես երևում է նշված նամակի շարունակութիւնից:

17 Т. В. Блаватская, Из истории греческой интеллигенции эллинистического времени, М., 1983, с. 24: Robert Browning, Bizantinische Schulen und Schulmeister, „Das Altertum“, Berlin, 1963, B—9, N 2, s. 19.

18 Մարտիան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրութիւն մեջ, Երևան, 1983, էջ 18, 20:

19 Գր. Մագիստրոսի Թղթերը, էջ 105, 228:

18 Ստ. Տարանցի, Պատմութիւն, էջ 285:

19 Գրիգոր Մագիստրոսը նկատի ունի Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն» առաջին գրքի 9 գլուխը՝ «Մեր առաջին թագավորների և իշխանների անիմաստասեր բարքի մասին»: Շարունակութիւն մեջ նկատի է առնված դարձյալ նույն գրքի 8 գլուխը, ինչպես նաև Ողբը (Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, էջ 8, 9, 11—13, 452):

20 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 9:

ելով տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էակացն հասեալ, ըստ որումն են յԱրարացոց և Քաղղէացոց և Յունաց, ոչ դանդաղեցայ ըննութեամբ զփորձ առնուլ»<sup>21</sup>:

Գրիգոր Մազիստրոսի և նրա կրթութեան վերաբերյալ ունենք այսպիսի վկայութիւն. «Յոյժ իմաստուն և հանճարեղ, և ներքին և արտաքին ուսմամբ ներկրթեալ վարժմամբ և մանկական տիոց՝ հայկական և յունական դպրութեամբ, մինչև հասեալ և հոետորական աստիճան փիլիսոփայութեան»<sup>22</sup>: Եթե կենսագիրը նկատի ունեցած լինի նույնիսկ նամակի վերը բերված տողերը, այդ ապացույց է կրկին այն բանի, որ «Քննիկոնը» հոետորական ուսման դասընթաց է, և Մազիստրոսը այն ձեռք է բերել մեծ դժվարութիւններով՝ այլևայլ դպրութիւններից, ուստի նամակի վերջում նա խնդրում է մի նոր օրինակ «Քննիկոնից»:

Այդ օրինակը պետք է հեշտ կարգացվի, որ ինքը շարշարվի թե՛ ընթերցելու, թե՛ ուսումնասիրելու ժամանակ: «Եւ խնդրեմք ի բումմէ լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեզ, զի այժմ մերձ առ ծերութիւն հասեալ եմք, և դիւրին վերժանեալ հասցուք ըստ կարողութեան, զի մի յերկուցունց կողմանցն ունիցիմք մարտակցութիւնս՝ տեսութեան և մտածութեան, քանզի լուսով քո տեսանեմք զլոյս: Ապա եթէ ոչ այսոքիկ հաճոյ թուեսցի բումդ աստուածապետական իշխանութեանդ, զոր և կամեսցի, այն իբրև յաստուածուստ պարզև համարեալ է մեզ: Ողջ լեր, փոխան Աստուծոյ»<sup>23</sup>:

Գրիգոր Մազիստրոսը ցանկանում է ունենալ «Քննիկոնի» ընդօրինակած նոր մատյան, որը գրված լինի ոչ թե Շիրակացու «Քննիկոնը» շարադրելիս օգտագործած գրատեսակով, որը դժվար ընթեռնելի էր, այլ դյուրընթեռնելի գրատեսակով, այսինքն՝ բոլորգրով<sup>24</sup>: Գրիգոր Մազիստրոսը Պետրոս կաթողիկոսից ստանում է իր խնդրածը, Անանիա Շիրակացու «Քննիկոնից» մի օրինակ՝ «զնորագոյնն մատեան»: Սանահինցիներին գրած նամակում հիշում է Սանահինի «հոետորական և երաժշտական վարժարանսն», ուր սովորում էին երիտասարդները «բոլոր արհեստից և մակացութեան»<sup>25</sup>: Իսկ Պետրոս Գետադարձի մոտ գտնվող իր աշակերտներին խորհուրդ է տալիս, թե ինչ ծրագրով պետք է պարապել, որն ավարտվում է այսպես. «Զի յամենայն իմաստասէրն խոստովան լիցի զգիտութիւն և ուրացեալ զանգիտութիւն, մանաւանդ ըստ կարողութեան քառիցըն արհեստից՝ թուական, երաժշտական, երկրաչափական, աստղաբաշխական»<sup>26</sup>: Աշակերտներն այն ձեռքի տակ պետք է ունենային, որպեսզի նրանից սովորեին:

Պետրոս Գետադարձից «զնորագոյնն մատեան» ստանալուց հետո այն մտցնում է ուսումնական իր ծրագրի մեջ: Այդ ժամանակից քառյակ գիտութիւնը դարձավ հայ վարդապետարանների ուսումնական ծրագրի անբաժանելի մասը: Հայ վարդապետարանի շրջանավարտի ձեռք բերած գիտութիւն-

21 Անդ:

22 Ա. Ալպոյանյան, Պատմութիւն հայ դպրոցի, Կահիրե, 1946, էջ 112—113:

23 Անդ, էջ 9—10:

24 Շիրակացին, ինչպես երևում է նրա ժամանակից, հենց նրա գործերի ընդօրինակութիւններից մեզ հասած պատասխիկներից, զրել է գրչագրով (ուղղագիծ երկաթագրով):

25 Գրիգոր Մազիստրոսի թղթերը, էջ 105: Հմմտ. Ա. Մարեոսյան, նորից Շիրակացու «Քննիկոնի» մասին, ՊԲԶ, 1981, № 2, էջ 228:

26 Նույն տեղում:

ների մեջ էր. «զբնաբանականն, զուսումնականն, զաստուածաբանականն, զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբաշխականն և զամենայն իմաստս հոետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան...», — ինչպես նշում է Կիրակոս Բանասերը<sup>27</sup>:

«Քննիկոնի» պարունակութեան մեջ էր նաև հայոց անշարժ տոմարի Անանիա Շիրակացու շարադրանքը: Հովհաննես Գրասխանակերտցին գրում է, որ Անաստաս կաթողիկոսը Անանիա Շիրակացուն հանձնարարել է գրել Հայոց անշարժ տոմարը: Ասողիկը հուշում է, որ Հայոց անշարժ տոմարը գտնվում էր «Քննիկոն» հրաշազան մատյանի մեջ, որ կաթողիկոսի պահանջով շարադրել էր Շիրակացին: Մագիստրոսը ներկայացնում է «Քննիկոնի» պարունակությունը՝ քառյակ արվեստներից դուրս, նաև այլ արհեստներ, որի մեջ՝ նաև տոմարական արվեստը, մակացություններ, մատենագրություններ, միով բանիվ, ողջ հոետորական դասընթացը: Այս ամենն ապացուցվում է նորահայտ նյութերով:

Պետրոս կաթողիկոսին ուղղված Գրիգոր Մագիստրոսի նամակը Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մասին վավերական եզակի փաստաթուղթ է, մատենագրական, մատենագիտական անգնահատելի աղբյուր Անանիա Շիրակացու անհայտացած երկի մասին: Նրա մեջ ներկայացված է «Քննիկոնի» բովանդակությունը, աղբյուրները, նրա տեղը հայ միջնադարյան ուսումնակրթական համակարգում: Նամակը նաև անփոխարինելի ուղեցույց է Անանիա Շիրակացու «Քննիկոնը» վերականգնելու ճանապարհին:

Նամակի «Քննիկոնին» վերաբերող հատվածը բանասիրության ուշադրությանն է արժանացել ավելի քան հարյուր տարի առաջ: Գ. Զարբհանալյանը այն հիշում է որպես Պետրոս կաթողիկոսին ուղարկած «ճմտական և գեղեցիկ» նամակներից մեկը<sup>28</sup>: Անցյալ դարի վերջերին Գ. Տեր-Մկրտչյանը օգտագործում է Անանիա Շիրակացու ժառանգության ճակատագիրը պարզելու կապակցությամբ<sup>29</sup>: Մ. Հայրապետյանը նամակից քաղվածք է բերում ցույց տալու համար, որ Շիրակացին սովորել է «քերականաց և հոետորական դպրոցներում»<sup>30</sup>:

Կ. Կոստանյանցը 1910 թ. հրատարակած Գրիգոր Մագիստրոսի Թղթերի ծանոթագրություններից մեկում, նկատի ունենալով սույն նամակը, գրում է. «Տ. Պետրոս ևս հոգատարություն է ունեցել ձեռագրերի մասին, նա ազատել է կորստից Անանիա Շիրակացու մեծ Քննիկոնը, որը սակայն մեզ չի հասել. այդ առիթ է տվել Մագիստրոսին, բողոքել «Արամյան ազգի անմտության» վրա, մտաբերելով և Մ. Խորենացու տրտունջը, և գոհունակություն հայտնել կաթողիկոսին, որ ձեռագրերը ժողովել և տեղավորել է եկեղեցում»<sup>31</sup>: Այստեղ միայն պետք է նկատել, որ ոչ թե Պետրոս կաթողիկոսն է հավաքել, այլ մինչև նա, դեռևս Անաստաս կաթողիկոսի ժամանակ, Շիրակացու գործը և օգտագործած աղբյուրները գտնվում էին կաթողիկոսարանում:

27 Կ. Հովանիյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 1—2:

28 Կ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 579:

29 Կ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1886, էջ 12:

30 Ս. Հայրապետյան, Անանիա Շիրակացի, կյանքն ու գործունեությունը, «Մատենագրանի գիտական նյութերի ժողովածու», Երևան, 1941, № 1, էջ 7:

31 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 295:

Նամակին ավելի հիմնավոր անդրադառնում է Մ. Արեղյանը: 1946 թ. հրատարակած «Հայոց հին գրականության պատմության»՝ Գրիգոր Մազիստրոսին նվիրված բաժնում նա գրում է. «Ուսումը լինում էր հայերեն, հարկավոր էր ունենալ հայերեն լեզվով գրքեր: Դրա համար կային հին թարգմանությունները, ինչպես Ուսմպիանոսի առակները, որը հիշում է Մազիստրոսը (ՄԸ, էջ 132): Կար և Անանիա Շիրակացու «Մեծ Քննիկոնը»,— այդուհետև միջինը, —ասում է նա,—տոգորը աստուածային և հնթակայեցեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն... երկրաչափութեանն և աստղաբաշխութեանն... և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակածութիւնք, և զրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հոնտորական»<sup>32</sup>: Ուրեմն առաջին անգամ Մ. Արեղյանն է նշում, որ Անանիա Շիրակացու «Քննիկոնը»՝ Մազիստրոսի կողմից օգտագործվել է որպես դասագիրք իր հիմնած ճեմարանում<sup>33</sup>:

1959 թվականին «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» աշխատության մեջ Գ. Պետրոսյանը, խոսելով Մազիստրոսի դպրոցի մասին, կրկնում է Մ. Արեղյանին. «Դասավանդումը կատարվում էր հայերեն լեզվով, իսկ որպես դասագրքեր՝ օգտագործվում էին թարգմանությունների հետ միասին նաև ինքնուրույն աշխատություններ: Մազիստրոսը այդ աշխատություններից բարձր էր գնահատում հատկապես Անանիա Շիրակացու «Մեծ Քրոնիկոնը», որովհետև այնտեղ, գրում է նա, ...միջինը են. և այլն»<sup>34</sup>: Մ. Արեղյանի մոտ օգտագործված «Մեծ Քննիկոնը» այստեղ սխալ կերպով դարձել է «Մեծ Քրոնիկոն»<sup>35</sup>:

32 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, էջ 20—21:

33 Հայ դպրոցի և մանկավարժության պատմության ուղղագծերում Ա. Մովսիսյանը նույնպես անդրադառնում է սույն նամակին (Ա. Մովսիսյան, Ուղղագծեր Հայ դպրոցի և մանկավարժության պատմության (5—15-րդ դարեր), Երևան, 1958, էջ 221):

34 Գ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 127, 131:

35 Որ Գ. Պետրոսյանը անմիջապես Մազիստրոսի Թղթից շի օգտվել, երևում է սույն բաղվածքի նախորդ պարբերությունից. «Գրիգոր Մազիստրոսի մանկավարժական հայացքների մասին մենք որոշակի կարծիք կարող ենք կազմել Տեր Պետրոսին ուղղված նրա վերահիշյալ Թղթից, որտեղ նա պարզ կերպով շարադրել է, թե ինչպես պետք է կաղմակերպվի ուսումը, ինչից պետք է սկսել և ինչով վերջացնել»,—գրում է Գ. Պետրոսյանը (էջ 129): Սակայն բերված փաստերը ոչ թե Տեր Պետրոսին ուղղված վերահիշյալ Թղթից են, որ գտնվում է «Քրոնիկոնի» 8—11 էջերում, այլ Բարսեղ և Եղիշե աշակերտներին ուղարկած նամակից, որը գտնվում է նույն գրքի 105—106 էջերում: Իսկ որ Պետրոսյանի ազդյուրը Մ. Արեղյանն է, երկվում է ստորև բերված օրինակից:

Մ. Արեղյան, նշվ. աշխատությունը, էջ 20:

«Այս էլ, ուրեմն առաջին շրջանի դասընթացն է: Ուսումը պետք է սկսել Ս. գրքի ընթերցանությամբ և առասպելավարժությամբ: Ապա հոմերական ու պղատենական և այլ գրքերի հատվածներից հետո «չարս արհեստները» թվարանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն և նոր անցնել երկրորդ աստիճանի ուսման, որ է բերականություն և մյուսները»:

Գ. Պետրոսյան, նշվ. աշխ. էջ 129:

«Ըստ Մազիստրոսի՝ առաջին աստիճանում ուսումը պետք է սկսել Ս. գրքի ընթերցանությունից և առասպելավարժությունից: Դրանից հետո պետք է կարդալ հոմերական և պղատենական ու այլ գրքերից հատվածներ և ապա ձեռնամուխ լինել «չարս արհեստներին» թվարանության, երաժշտության, աստղաբաշխության ուսումնասիրությանը: Միայն այս բոլորից հետո կարելի է սկսել երկրորդ աստիճանը՝ ուսումը, որն



Գրիգոր Մազիսարոսի նամակին Գ. Պետրոսյանը կրկին անդրադառնում է 1980 թվականին: Անանիա Շիրակացու գիտական ժառանգության ուսումնասիրությունը համարելով ավարտված «Ֆիզիկա-մաթեմատիկական և այլ գիտությունների պատմության տեսանկյունից», գտնում է, որ «մնացել են սկզբնաղբյուրների հետ կապված որոշ կնճառահարցեր»<sup>36</sup>, որոնց ինքը պետք է անդրադառնա, մանավանդ, որ «որոշ նոր ուսումնասիրություններում «Քննիկոնի» բովանդակությունը բխեցնում են Գրիգոր Մազիսարոսի նամակից»:

Ժամանակին որդեգրելով Մ. Արեղյանի տեսակետը նա հայտարարում էր, որ Մազիսարոսը իր դպրոցում դասավանդվող «աշխատություններից բարձր էր գնահատում հատկապես Անանիա Շիրակացու «Մեծ Քրոնիկոնը», այժմ ժխտում է այն, որպեսզի արդարացնի իր նոր որդեգրությունը, այսինքր՝ «Քննիկոնը» տոմարական աշխատություն է, ուրիշ ոչինչ»<sup>37</sup>,

«Մեր «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում...» աշխատության մեջ,—պարզաբանում է Գ. Պետրոսյանը,—տոմարական հարցերը քննության շնչ են հնթարկվել, որոշ հարցեր՝ կապված Գրիգոր Մազիսարոսի նամակի հետ, իրենց լուսարանությունը շնչ ստացել»<sup>38</sup>: Սվ ահա սկսում է նամակի «լուսարանության» առաջին հերթը. «Գրիգոր Մազիսարոսի նամակի վերնագրում նշված է «Մեծ Քննիկոն», բնագրում «Քննիկոն» բառը չի գործածվում: Ավելին, նամակում բերված գիտությունների շարքում «Քննիկոնի» մասին ոչ մի հիշատակություն չկա: Ամբողջ նամակում ոչ մի բառ չկա Անանիա Շիրակացու Անաստաս կաթողիկոսի կողմից արված հանձնարարությունների մասին: Այս ամենը ցույց է տալիս, որ վերնագիրը հետո է գրված, և նրա մեջ նշված «Մեծ Քննիկոնը» ոչ մի առնչություն չունի նամակի հետ, դա հետագայում կատարված հավելում է», որ «գրչագիրները շտրանալով հարցի էության մեջ, բոլոր իրենց նախասիրության վերնագիր են դրել և այնտեղ էլ գործ ածել «Քննիկոն» բառը: Մազիսարոսն իր նամակին այդպիսի վերնագիր դնել չէր կարող»<sup>39</sup>:

Եթե Պետրոսյանի կարծիքով «Քննիկոնը» միայն տոմար է և ուրիշ ոչինչ, նշանակում է Մազիսարոսի դպրոցում թվարանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը Անանիա Շիրակացու

«Առասպել» բառը նշանակում է զրույց աստվածների և դյուցազների մասին, և առակ արդի սովորական իմաստով»:

ընդգրկում է քրեականությունը և այլ առարկաներ: «Առասպել» բառը և զրույց էր աստվածների ու դյուցազունների մասին և առակ այն իմաստով, ինչպես այժմ է հասկացվում»:

36 Գ. Պետրոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՊԲՀ, 1980, № 2, էջ 212:

37 Ա. Արրահամյանը Անանիա Շիրակացու «Քրոնիկոնը» տոմարական աշխատություն է համարել Շիրակացուն նվիրված մենագրության մեջ (1944 թ., էջ 105): 1979 թ. Շիրակացու Մատենագրության աշխարհաբար հատորյակի առաջաբանում Ա. Արրահամյանը և Գ. Պետրոսյանը գրում են. «Շիրակացու տոմարական աշխատություններից ամենակարևորը «Քրոնիկոնն» է (էջ 14): Իր հաջորդ հոդվածում Գ. Պետրոսյանը «սրբազրում» է. «Անանիա Շիրակացու տոմարական աշխատությունը հայ մատենագրության մեջ հայտնի է «Քննիկոն» կամ «Քրոնիկոն» անվան տակ (ՊԲՀ, 1983, № 4, էջ 132):

38 Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., ՊԲՀ, 1980, № 2, էջ 212, ծն. 1:

39 Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 215:

«Քննիկներից» շին սովորել, ինչպես մի ժամանակ կրկնում էր ինքը<sup>40</sup>: Հաջորդ հոդվածում (1983 թ.)<sup>41</sup> պնդելով, որ «Անանիա Շիրակացու՝ գիտության պատմության հայտնի տոմարական աշխատությունն է», որ «Քննիկներ բացի տոմարական նյութից ու աղյուսակներից ուրիշ ոչինչ չի պարունակում»<sup>42</sup>, սկսում է «պարզաբանել» որոշ հարցեր՝ կապված Գրիգոր Մազիսարոսի նամակի հետ: «Այժմ դիմենք Գրիգոր Մազիսարոսի նամակին՝ ուղղված Պետրոս կաթողիկոսին, որովհետև այդ նամակի վերնագրում տեղ է գտել «Մեծ Քրոնիկոն» անվանումը,— սկսում է Պետրոսյանը նույնությամբ, ինչպես 1980 թ. հոդվածում<sup>43</sup>: նամակը նույն շափով բերելուց և նրա մեջ «մատեան» բառը հաշվելուց հետո, գյուտ է անում. նամակում «մատեան» բառի գործածության... հաճախականությամբ «բացահայտում» է Շիրակացու աշխատությունների բանակը և բնագավառները: Խոսքը տանք Գ. Պետրոսյանին.

«Գրիգոր Մազիսարոսի նամակի վերնագրում գրված է. «և հարցումն զրոց Շիրակայնոյն, զոր Մեծ Քննիկոն անուանեն»: Առաջին մասը որոշակի նշում է, որ հարցում է արվում Շիրակացու գրածների, աշխատությունների մասին: Իսկ երկրորդ մասը ցույց է տալիս, թե այդ աշխատությունները ինչպես են անվանվել: Եթե խոսքը «Քննիկոնի» մասին լիներ, Մազիսարոսը ամբողջ նամակում գոնե մեկ անգամ բացի վերնագրից, կնշեր «Քննիկոնի» մասին. նման բան գոյություն չունի: Մազիսարոսը իր նամակում վեց անգամ զգրծածում է մատյան բառը, այդ նշանակում է՝ խոսքը գնում է Շիրակացու աշխատությունների մասին<sup>44</sup>, որոնք զետեղված են այդ մատյանի մեջ: Մեջ ենք բերում այդ նշումները.

1. ... հաւաքեալ ի բազմազան և յօրնաբեղուն մատենից...

2... որք նախքան զայնոսիկ հաւաքեալ ի մատեանս...

3... Եւ արդ, քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ...

4.... ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկեալ...

5.... եւ յայդմ մատենի մակազրութեան վերժանեաք...

6. ... եւ խնդրեմք ի քումմէ լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեզ...

40 Գ. Պետրոսյան, Մաթեմատիկան... էջ 130:

41 Գ. Պետրոսյան, «Նորից Անանիա Շիրակացու Քննիկոնի մասին» ՊԲԶ, 1983, 4, էջ 135:

42 Անդ, էջ 131, 133, 135: Մեղադրելով նրանց ովքեր հակառակ տեսակետ են պաշտպանում, հայտարարում է, որ նրանք «վերցրել են Գ. Պետրոսյանի եզրակացությունն ու ներկայացրել որպես նոր հայտնագործություն» (էջ 136): Մատնացույց անելով «Քննիկոնին» նվիրված մի շարք հոդվածներ, գրում է, որ «Գիտական տեսակետից դրանք ոչինչ չեն ներկայացնում, իսկ որոշ հարցեր արմատապես խեղաթյուրում են» (էջ 181), մոռանալով, որ քիչ առաջ գրել էր թե «որպես նոր հայտնագործություններ ներկայացրած եզրակացությունները իրեն նախկին եզրակացություններն են»: Ստացվում է, որ «գիտական տեսակետից ոչինչ չեն ներկայացնող և որոշ հարցեր արմատապես խեղաթյուրող եզրակացությունները» վերցված են Գ. Պետրոսյանից ու ներկայացված որպես «նոր հայտնագործություն»: Այս էլ նշանակում է, որ Գ. Պետրոսյանի եզրակացությունները «գիտական տեսակետից ոչինչ չեն ներկայացնում, իսկ որոշ հարցեր արմատապես խեղաթյուրում են»:

Անկեղծ խոստովանություն:

43 Հմմտ. ՊԲԶ, 1980, № 2, էջ 214:

44 Ընդգծումը մերն է Ա. Մ.:

Մագիստրոսի նամակում նշված են Անանիա Շիրակացու գիտական աշխատությունների բնագավառները, այդ թվում և «քառիցն արհեստք», թվարանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղագիտությունը: Տոմարագիտության մասին նամակում խոսք չկա: Այս թուղթը որոշակի կերպով ցույց է տալիս, որ նամակի վերնագրում «Մեծ քննիկոնը» ավելացված է հետագայում, գրիչների կամ խմբագիրների կողմից»<sup>45</sup>:

Ոչ գիտական մոտեցում, և ահա թե ինչու:

Սկսենք սկզբից «և հարցումն գրոց Շիրակայնոյ զոր մեծ Քննիկոն անուանեն» (էջ 135) նախագասություն մեջ բաց է թողնված «Անանիայի» բառը: Խորագիրը նշանակում է «և հարցումն (խնդրանք) Անանիա Շիրակացու գրքի որ մեծ Քննիկոն են անվանում» և ոչ թե «և հարցումն Շիրակացու գրածների, աշխատությունների մասին»: «Գրոց»-ը գրաբարում «գիրք» բառի եզակի թվի սեռականն է՝ գիրք-գրոց և ոչ՝ հոգնակին՝ որը կլինի «գրեանք» «գրեանց» կամ «գրենաց»: Ուրեմն խոսքը մի գրքի՝ «Քննիկոնի» մասին է, և ոչ մի բանի աշխատությունների:

Վեց անգամ մատյան բառի մեջ հեղինակը տեսնում է Շիրակացու աշխատության վեց բնագավառները, որոնց մեջ՝ քառից արվեստները: Իսկ եթե նամակը մի քիչ երկարեր և «մատեան» բառը վեցի փոխարեն կրկնվեր տասնվեց անգամ, ըստ Գ. Պետրոսյանի, Շիրակացին պետք է ունենար այդքան բնագավառների վերաբերյալ աշխատություններ: Բայց ի՞նչ իրավունքով Գ. Պետրոսյանը հաշվի չի առել նամակում հանդիպող «գիրք» բառը, որը «մատեանի» հոմանիշն է և օգտագործվում է «Քննիկոնի» փոխարեն, ինչպես «Անանիայի գրոց Շիրակայնոյ» «գգիրս Անանիայի Շիրակայնոյ» դեպքերում. չէ՞ որ սրանք էլ կարող էին բնագավառներ նշանակել:

Բայց տեսնենք թե «մատեան» բառը վեց անգամ ինչ առումներով է գործածվել:

1. «Մատենից» հոգնակին նշանակում է «մատյաններից», հունական, քաղղեական բազմաթիվ մատյաններից (որոնց պարունակությունից Շիրակացին քաղել է իր «Քննիկոնի» նյութը)...

2. Այս նույն նյութերը մինչև այս մատյանում («Քննիկոնում») հավաքվելը...

3. Անանիայի մատյանի («Քննիկոնի») մասին...

4. Այսպիսի մատյանի («Քննիկոնի»)...

5. Այդ մատյանի («Քննիկոնի»)...

6. Նոր մատյան («Քննիկոն»), նոր արտագրություն, նոր ձեռագիր:

Այսպիսով «մատեան» բառի գործածության վեցից չորս դեպքերում (2, 3, 4, 5) գրվում է «Քննիկոնի» փոխարեն: Առաջին դեպքում՝ այլ ժողովուրդների մատյաններ են, իսկ վերջինը...:

Այս վերջին մատյանը վեցերորդ բնագավառն է, որի գործը շատ դժվար է: Բանն այն է, որ Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսից նոր միայն խնդրում էր այդ նորագույն մատյանը, որը «Քննիկոնի» նոր ընդօրինակությունն էր լինելու:

Ըստ Պետրոսյանի, Շիրակացու գիտական ժառանգությունը ոչ թե Գրիգոր Մագիստրոսի նամակում նշված առարկաների հիման վրա, Շիրակացու

արդեն հայտնի և նորահայտ բնագրերի պատմաքննական, բանասիրական հետազոտությունների միջոցով պետք է ուսումնասիրել (այդ, ըստ նրա «արատավոր» մեթոդ է), այլ՝ գուշակությամբ. բանի «մատեան» բառ, նույնքան բնագավառ:

1974 թ. լույս տեսան «Անանիա Շիրակացու «Քննիկոնը» վերնագրով մեր հոդվածները<sup>46</sup>, ուր Գրիգոր Մազիստրոսի նամակի մասին նկատեցինք, որ «Պետրոս Գետազարձ կաթողիկոսին Գրիգոր Մազիստրոսի գրած սույն նամակը անգնահատելի ծառայություն է մատուցում «Քննիկոնի» հայտնաբերման և Շիրակացու գործունեության գնահատման գործում և ճիշտ չի ընկալվել ըստ ամենայնի, շնայած շատերն են դիմել նրան և օգտագործել մեջբերումներով»<sup>47</sup>, որ այս «Քննիկոնը» կուռ ծրագրով և հստակ նպատակադրումով ստեղծված աշխատություն է եղել գիտական հարուստ բովանդակությամբ, որ այն հայոց դպրության մեջ բարձրագույն կրթությունը արժատավորելու համար գրված դասագիրք էր՝ կազմված բնական գիտությունների հիմքի վրա: Անտիկ աշխարհում դաստիարակության բովանդակությունը կազմող «քառյակ արվեստները», որ հետագայում (VI—XV դդ.) Արևմտյան Եվրոպայում և Հայաստանում բարձրագույն կրթության հիմք դարձան, «Քննիկոնի» միայն մի մասն են կազմում» ներկայացրել ենք «Քննիկոնի» բովանդակությունը ըստ Գրիգոր Մազիստրոսի նշված նամակի<sup>48</sup>:

Այդ նամակը նշում է նաև «Քննիկոնից» տեղիներ, որոնց հանդիպում ենք Շիրակացու անունով հայտնի երկերում. Այսպես. «զոր և ինքն իսկ, որ մատենագրեց զայդոսիկ յառաջնում իւրոյ տրամաբանութեան բազում տարակուսանս և կեղերջականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառութիւնս» (այսինքն՝ այդպիսի աշխատությունների նկատմամբ մեր ազգի ունեցած անփութության վերաբերյալ Շիրակացու բազմաթիվ տարակուսանքները և տրտունջները), որ կարդում ենք նամակի 8-րդ էջում, մենք գտնում ենք նրա այսպես կոչված «Ինքնակենսագրության» մեջ. «Եւ վասն զի ոչ գտանէր յաշխարհիս հայոց մարդ որ, որ գիտէր իմաստասիրութիւնն, այլ և ոչ անգամ գիրք արուեստից ուրեք գտանէին: Ահա և ի Յունացն դիմեցի յաշխարհ»: (Շիրակացու գործածած «իմաստասիրությունը» Մազիստրոսի մոտ անվանված է «խոհեմական արհեստ»՝ «քառիցն

46 Ա. Մաքեռայան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 7, էջ 66—68, № 8, էջ 71—81:

47 Անդ, էջ 67:

48 Անդ, էջ 67—68: Մրանից հետո ձեռնամուխ եղանք «Քննիկոնի վերականգնման դժվարին և պատասխանատու գործին, հիմք ունենալով Հ. Գրասխանակերտցու, Ս. Ասողիկի, Գ. Մազիստրոսի վկայությունները, օգտագործելով Շիրակացու գործերի հրատարակությունները, նրա մասին ուսումնասիրությունները և հատկապես Մատենադարանի ձեռագրերի անհայտ և անտիպ նյութերը:

1979 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» 2-րդ համարում հրատարակեցինք «Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության բաժինը» (էջ 163—178), իսկ «Լրաբերում», այդ բաժնի մաս կազմող «Անանիա Շիրակացու «Աշխարհագրության» հետ կապված մի բանի հարցեր» (№ 9, էջ 78—86) և «Եվկլիդեսի «Տարբերք» Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության մաս» (1980, № 1, էջ 89—95) հոդվածները: Մինչ այդ հրատարակել էինք «Նորահայտ պատասխաններ Անանիա Շիրակացու թվարանության դասագրքից» (1974, № 6, էջ 65—76) հոդվածը, 7-րդ դարի երեք պատասխանների հիման վրա:

արհեստը»): Ապա՝ «Եւ արդ՝ եւ տրուպս Հայաստանեաց ուսայ ի նմանէ (Տյուրքիկոսէ—Ա. Մ.). զհզար արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելոյ ձեռնառու, միայն շանիւ իմոյ անձինս... թէպէտ և ոչ որ եղև շնորհակալ և մեծարաւզ իմոյ աշխատութեան, բանզի և ոչ սիրաւզ իսկ է ազգ մեր իմաստից և գիտութեանց, այլ ծոյրք և ձանձրացողք... Կեղծաւորք սնափառք ցուցանեն ունել զկերպարանս գիտութեանն և կոչիլ ի մարդկանէ բարբի հայցեն: Այլ և ի վերայ իմ պարսականս տգիտութեան, որք յինքենէ էին յերիւրեալք...»<sup>49</sup>:

Գ. Մագիստրոսը նամակում նշում է, որ այս հատվածը գտնվում է «Քննիկոնի» մեջ՝ «յառաջնում իւրոյ տրամաբանութեան»:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 699 և № 10381 ձեռագրերում Շիրակացու գանգատը պարունակող «Ինքնակենսագրությունը» գտնվում է գործնական թվարանության սկզբում<sup>50</sup>: Հուլյները ունեին տեսական թվարանություն և գործնական թվարանություն՝ «արիֆմետիկա» և «լոգիստիկա» անուններով: Մագիստրոսը «լոգիստական» թարգմանում է «տրամաբանություն»: Իսկապես, Շիրակացու գործնական թվարանության կամ տրամաբանության սկզբում է գտնվում «ինքնակենսագրությունը», որի մեջ վերը բերված գանգատական խոսքերն են: Իսկ այս էլ նշանակում է, որ վերը բերված նյութերը, որոնք գործնական թվարանության բաղադրյալ մասերն են, մտել են «Քննիկոնի» մեջ:

Գրիգոր Մագիստրոսի նամակի և Անանիա Շիրակացու արդեն հայտնի և մինչև այսօր անհայտ երկերի հիման վրա վերականգնվում է Անանիա Շիրակացու «Քննիկոնը»:

Շիրակացու գործերի վերականգնման ուղղությամբ արդեն սկսած աշխատանքները, որոնք հենվում են նաև Գրիգոր Մագիստրոսի նամակի վրա, Գ. Պետրոսյանը համարում է «մուրրության արդյունք»: Մուրրության մեջ են նրանք, ովքեր Անանիա Շիրակացու նման վիթխարի անհատականության գիտական ժառանգության ուսումնասիրությունը համարում են ավարտված, մի գիտնականի, որն իր մասին գրում է, թե «բաւանդակեցի զգպրութիւն մերոյ ազգիս Հայաստանեաց, և հմուտ եղեալ աստուածաշունչ գրոց... ամսութ ուսայ լիով զարուեստ համարողութեան» (այսինքն մաթեմատիկան, ուսումնականը կամ քառյակ գիտությունները), որ «հմուտ եղէ գրոց բազմաց, որք և ոչ ի մերս են թարգմանեալ լեզուս... յայտնիք և գաղտնիք, արտաբինք, արուեստականք և պատմադիրք, բժշկականք, ժամանակագիրք...», որ «զհզար արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, բերի յաշխարհս

49 Անանիա Շիրակացի, Մատենադրություն, էջ 208—209:

50 Ահա գործնական թվարանության պարունակությունը № 699 ձեռագրում. 187բ Անանիայի Շիրակուհու իրիցս երանեալ վարդապետի վասն սրպիսութեան կենաց իւրոց (այսպես կոչված «ինքնակենսագրությունը» Ա. Մ.): 194ա Անանիայի յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման: 204ա Գրեմ ձեզ և խրախճանականս յորժամ ի կերակուրս և յըմբելիս զուարճանայք և կամիր խաւսել բանս զուարճացուցիչս և ծիծաղականս: 207ա Անանիայի Շիրակուհու համարողի յաղագս կշոյ և կշոց և կշոսրգաց: 211ա Անանիայի Շիրակուհու յաղագս շափոյ և շափուց և պատարաց: 214ա Անանիայի Շիրակուհու համարողի թիւք որ շափութենն տանց Հին կտակարանացն: 215ա Նորին՝ թիւք որ շափութեանց նոր կտակարանացն: Բ էջբ, որպես պետք է լիներ նաև հաջորդ երկի վերնագիրը, չի գրված: Այն դեռում ենք 10381 ձեռագրից (էջ 331բ): 216ա Պատմութիւն երկոտասան քարանց 217ա Վհարումն Անանիայի Շիրակուհու ժողովածոյն և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, ամէն:

մեր...»<sup>51</sup>, նրան, որ այդ գիտությունները «Քննիկոնի» մեջ ամբարելով ամբողջական դասընթաց է ստեղծել իր ժողովրդին լուսավորելու համար, համարում են միայն թվաբանական երեք գործողությունների, քսանչորս խրնդիրների, խրախճանակների, շափ ու կշռի, տոմարի հեղինակ, և նրան զբրկում իր վիթխարի գիտական ժառանգությունից, և այն փառավոր տեղից, որ նրան է պատկանում հայրենի գիտության, ուսման և կրթության, ինչպես նաև համաշխարհային գիտության ու մանկավարժության պատմության բնագավառներում:

«Հայ դպրոցի պատմությունը,—գրում է Ա. Ալպոյաճյանը,—հայ քաղաքակրթության պատմության մեկ էջը կներկայացնէ: Ուստի պետք է միշտ այդ անկյունեն դիտել մեր կրթական շարժումը, որ առնչություններ և կապեր ունի միշտ ընդհանուր ազգային մշակութային շարժման հետ և որ անոր մեջ հսկա դեր կատարած է»<sup>52</sup>: Անանիա Շիրակացին մեր գիտության և կրթական շարժման խոշորագույն ներկայացուցիչներից է, և նրա գործունեությունը պետք է գնահատել մեր պատմության ընդհանուր խորքի վրա: Հիշյալ նամակը մեր անցյալի կրթական շարժման վիթխարի մեծություններից մեկի, Շիրակացու ժառանգության գնահատման կարևոր ուղենիշ է, գրված նույն շարժման մի այլ մեծության կողմից: Պետք է ակնածանքով և երկյուղածությամբ մոտենալ նրանց ժառանգությանը:

Հայ բարձրագույն դպրոցի ծրագրի հիմքում V դարից ընկած էին եռյակ գիտությունները, որոնք VII դարում այլևս չէին բավարարում: Դեռևս V դ. վերջին Դավիթ Անհաղթը առաջարկում էր տիրապետել քառյակ գիտություններին: Բարձրագույն կրթության համար հայերը այն ժամանակ գնում էին Եդեսիա, Անտիոք, Կեսարիա, Կ. Պոլիս, Աթենք, Ալեքսանդրիա և այլուր: Հայաստանում «է (7) դարեն սկսեալ,—գրում է Ա. Ալպոյաճյանը,—չկրցան այս սահմանափակ ծրագրով զոհանալ, որն ստիպված ավելի ճոխացրին, վասն զի այլևս կզգուշանային հույն շրջանակներու հետ հարաբերելե, նախ տիրող արարների ատելությունը չզրգոելու համար... և երկրորդ՝ անոր համար, որ հայերը սկսած էին իրենց ալ վերապահ դիրք բռնել հանդեպ հունաց, որոնք, երբ առիթը գտնեին կը նեղեին, ընդունել տալու համար անոնց քաղկեդոնականությունը...: Հայ եկեղեցու անկախությունը պահելու նախանձախնդրությունը զխավոր նպատակն է հայ կղերին... որ չէր ուզեր որ ազգային դավակները բարձրագույն ուսման համար Հունաստան երթային: Հարկ եղավ բարձրագույն ուսմանց պետքը Հայաստանի մեջ լրացնել... ավելի զարկ տրվեցավ վարդապետարաններուն: Օտարին կարոտ չլլալու համար... Օտար ուսմանց ալ հետամուտ եղավ»<sup>53</sup>:

Ա. Ալպոյաճյանը շփտեր «Քննիկոնի» մասին: Հայ դպրոցի պատմությանը նվիրված ամբողջ աշխատության մեջ չի հիշվում ոչ «Քննիկոնը», ոչ էլ Գրիգոր Մագիստրոսի հիշյալ նամակը: Բայց հայ դպրոցի պատմության հմուտ մասնագետը ճշմարիտ ներկայացնում է ժամանակաշրջանը և նրա պահանջը, որը պետք է ստեղծեր, և ստեղծեց «Քննիկոնը»:

51 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1944, էջ 209:

52 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ դպրոցի, Կահիրե, 1945, «Երկու խոսք»:

53 Անդ, էջ 178:

A. S. МАТЕВОСЯН

## ГРИГОР МАГИСТРОС И «КННИКОН» АНАНИИ ШИРАКАЦИ

## Р е з ю м е

Замечательный деятель армянской культуры и науки XI в. Григор Магистрос обратился к армянскому католикосу Петросу (1019—1058 гг.) с просьбой прислать ему один экземпляр «Кнникона» (666 г.), который хранился в резиденции католикосата. Григор Магистрос намеревался использовать его в своей академии. Поэтому в письме он, во-первых, представляет содержание «Кнникона», в который входят арифметика, музыка, геометрия, астрономия, искусства, литература и многое другое, затем показывает, что все эти науки входят в риторическое образование, и поэтому необходимо размножить и в учебных целях применять «Кнникон» и в духовных школах. Как следует из последующих писем Григора Магистроса, он получил список «Кнникона» Анании Ширакаци, ставший одним из учебников в его школе.

A. S. MATHEVOSSIAN

## GRIGOR MAGISTROS ET LE „KNNIKON“ D'ANANIA CHIRAKATSI

## R é s u m é

Grigor Magistros, célèbre homme de science et de lettres du XIe siècle, est l'auteur d'une lettre adressée au catholicos arménien Pétrós (1019—1058) où il demande à ce dernier de lui envoyer l'exemplaire du „Knnikon“ (666) conservé à la résidence du catholicossat. Grigor Magistros avait l'intention de l'utiliser comme manuel dans son académie. Aussi, dans sa lettre, il commence par présenter le contenu du „Knnikon“ qui inclut l'arithmétique, la musique, la géométrie, l'astronomie, l'art, la littérature, etc., puis il montre que toutes ces sciences font partie de l'instruction rhétorique, d'où la nécessité de copier le „Knnikon“ et de s'en servir pour enseigner dans les écoles religieuses. Comme il s'ensuit des lettres suivantes de Grigor Magistros, il reçut une copie du „Knnikon“ d'Anania Chirakatsi et en fit un des manuels de son école.